



BMZ



Federal Ministry
for Economic Cooperation
and Development

«ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՄՆՈՒՆԴ»

ԱՎԱՆԴԱԿԱՆԻՑ
ԱՆՑՈՒՄ ՕՐԳԱՆԱԿԱՆԻ



ԻՆՁ Է ՕՐԳԱՆԱԿԱՆ
ԿԱՍ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ԲՆԱԴԱՀՊԱՆԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱԶԴՈՒՄ ԵՆ ԱՐՏԱՐԱՐՈՂՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊԱՌՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ

- Ողջ աշխարհում օրգանական սննդամթերքների սպառումը էլ ավելի մեծ թափ է առնում: «Օրգանական», «Էկո» կամ «Բիո» մակնշված արտադրանքի համաշխարհային շուկան տարեց տարի աճում է:
- Պետությունները ջանքեր են ներդնում գյուղատնտեսության մեջ էկոլոգիական մեթոդներ ներդնելուն, քանի որ այդ մեթոդների կիրառման շնորհիվ լուծվում են մի շարք մարդկության համար կարևոր խնդիրներ՝ կենսաբանական ռեսուրսների պահպանություն, մաքուր շրջակա միջավայրի ստեղծում, արտանետումների կրճատում:
- Օրգանական մեթոդների կիրառումը ապահովում է բնությանը և մարդուն սպառնացող գլոբալ մարտահրավերների մեղմացումը, օրինակ՝ կլիմայի փոփոխություն, հողերի դեգրադացում և անսպասարկում, կենսաբազմազանության վտանգ, ջրի, հողի, օդի աղտոտում: Այս մարտահրավերներին դիմադրելու համար անհրաժեշտ է միավորել տեղական, տարածաշրջանային և միջազգային ջանքերը:
- Սպառողը իր ընտրությունը ի հօգուտ «Օրգանական», «Էկո», «Բիո» մակնշված արտադրանքի անելիս՝ նպաստում է թվարկած մարտահրավերների լուծմանը և ապագա սերունդներին ժառանգում է պահպանված բնություն ու բնական ռեսուրսներ:
- «Օրգանական», «Էկո», «Բիո» արտադրանքը բարենպաստ է նաև մարդու առողջության համար, քանի որ գերծ է աղտոտիչներից ու գենետիկորեն փոխակերպված բաղադրիչներից, ինչպես նաև ենթարկվել է նվազագույն արտաքին միջամտությունների:
- Գյուղատնտեսական, սննդի, կերային արտադրատեսակների վրա «Օրգանական», «Էկո», «Բիո» մակնշումները վկայում են այն մասին, որ արտադրանքը պատրաստվել է օրգանական սննդի ու գյուղատնտեսության ստանդարտների պահանջներին համաձայն և դրանց պատրաստման ողջ ընթացքը իսկվել է և հավաստվել է (սերտիֆիկացվել) անկախ և իրավասու օրգանական սերտիֆիկացնող մարմնի կողմից:
- «Օրգանական», «Էկո» կամ «Բիո» սննդի շուկան այլընտրանքային շուկա է, որը նախատեսում է օրգանական ստանդարտների առկայություն, պարտադիր կամ կամավոր, միջազգային, պետական, միջպետական կամ մասնավոր, ինչպես նաև սպառողի համար ապահովում է երաշխիքներ այն մասին, որ օրգանական ստանդարտի պահանջները պահպանվել են արտադրողների կողմից արտադրության ողջ շղթայում՝ հողից մինչև խանութ:



ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՐԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՍՈՒՔՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՄ

ՀՀ-ում 2008 թվականից ընդունել է «Օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքը, որը համահունչ է ՄԱԿ-ի ՊԳԿ/ԱՀԿ «Կողեքս ալիմենտարիումի» օրգանական մակնշված արտադրանքի մակնշման, արտադրության, պատրաստման ուղեցույցին:



2002 թվականից ՀՀ-ում գործում է օրգանական սերտիֆիկացնող մարմին «ԷԿՈԳԼՈԲ» ՍՊԸ, որի կայացումը նպաստել է ՀՀ-ում օրգանական արտադրության զարգացմանը: Ընկերությունը իր հաճախորդներին առաջարկում է մասնավոր «Գրին Կոփաս» օրգանական գյուղատնտեսության ստանդարտը, որը համարժեք է ԵՄ օրգանական կանոնակարգերին 834/2007, 889/2008, 1235/2008, ինչպես նաև համարժեք է «Կողեքս ալիմենտարիում» և Շվեյցարիայի օրգանական օրենքին:



2009 թվականից «ԷԿՈԳԼՈԲ» ՍՊԸ իրականացնում է նաև սերտիֆիկացման ծրագիր համաձայն ԱՄՆ Ազգային Օրգանական Ծրագրի և Կանադայի Օրգանական Կանոնակարգի:

Տե՛ս ավելին www.ecoglobe.com

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ` ՀՀ ԱՐՏԱՂՈՐՈՆԵՐԻ ԵՎ ՀՀ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱՂՈՐՈՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

- © Հայկական օրգանական սերտիֆիկացնող մարմինը ունի մի շարք միջազգային և ազգային հավատարմագրեր և ճանաչումներ: Տե՛ս հավատարմագրերը և ճանաչումները www.ecoglobe.com կայքում:
- © Տարածաշրջանում գրեթե մինչ օրս բացակայում են տեղական, սակայն միջազգային որոկավորում ունեցող սերտիֆիկացնող մարմինները: ՀՀ ում սերտիֆիկացնող մարմնի առկայությունը հայ արտադրողի ու ֆերմերի համար ստեղծում է լավ նախադրյալներ ոլորտը զարգացնելու համար:
- © «ԷԿՈԳԼՈԲ» ՍՊԸ հանդիսանում է Եվրոպական Սերտիֆիկացնող մարմինների խորհրդի (EOCC) անդամ, ունի ԵՄ, Շվեյցարիայի, Կանադայի պետությունների ճանաչումը, ԱՄՆ Գյուղդեպարտամենտի և Գերմանական հավատարմագրող մարմնի հավատարմագրումը, ՀՀ կառավարության ճանաչումը որպես լիազոր և իրավասու մարմին:
- © «ԷԿՈԳԼՈԲ» սերտիֆիկացնող մարմինը բացի բուն սերտիֆիկացման գործունեությունից զբաղվում է ուսումնական ծրագրերով, օրինաստեղծ և նորմատիվների մշակության գործունեությամբ:

ՕՐԳԱՆԱԿԱՆ
ՍԵՐՏՖԻԿԱՑՈՒՄ.
ՕՐԳԱՆԱԿԱՆ
ՆՇԱՆՆԵՐ
ԵՎ ԼՈԳՈՆԵՐ

ՕՐԳԱՆԱԿԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄԸ ԱՐՏԱՂՐԱՆՔԻ ՀԱՍՏԱՊԱՏԱՍԽԱՆՈՒ-
ԹՅՈՒՆԸ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ ՓԱՀԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՎԱՍՏԵԼՈՒ
ԿԱՐԳ Է: ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ, ՕՐԳԱՆԱԿԱՆ ԱՐՏԱՂՐԱՆՔԻ ԱՐՏԱՂՐՈՂՆԵՐԸ
ԻՐԱՎՈՒՆՔ ԵՆ ՍՏԱՆՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՀԱՏՈՒԿ ՄԱԿԵՇՄԱՆ ՆՇԱՆ, ՈՐԸ
ՀԱՍՏԱՏՈՒՄ Է ԱՐՏԱՂՐԱՆՔԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԾԱԳՈՒՄԸ:



Armenia Organic - ՀՀ օրենսդրությամբ սահմանած Նշան է, որը պարտադիր է կիրառել օրգանա-
կան սերտիֆիկացված արտադրանքի մակնշման համար:
Այս Նշանի կիրառումը նպատակ ունի բարձրացնել օրգանական արտադրանքի ճանաչելիությունը
հայ սպառողների շրջանում, ինչպես նաև տարբերակել այն: Օրգանական Նշանների կիրա-
ռությունը միշտ պարտադրում է պիտակի վրա մակնշել օրգանական սերտիֆիկացնող մարմնի
անվանումը:



Euro Leaf - Եվրոպական միության պահանջնրով արտադրված գյուղմթերքի և սննդամթերքի մի-
ասնական համակարգի Նշան, որը կիրառվում է սերտիֆիկացնող մարմնի կողի հետ մեկտեղ, ինչ-
պես նաև արտադրության երկրի Նշամբ: Եվրոպական օրգանական շուկա մուտք գործելու հա-
մար անհրաժեշտ է իրականացնել ԵՄ 834/07, 889/08 հրահանգները և միայն դրանից հետո
իրավունք ձեռք բերել կիրառելու այս մակնշումը:



USDA Organic - ԱՄՆ Գյուղատնտեսության դեպարտամենտի կողմից մշակված ազգային օրգանական ստանդարտը եզակի է նրանով, որ այն հաստատված է պետական մակարդակով: Սերտիֆիկացում իրականացնելու համար անհրաժեշտ է հավարատմանգրվել Ամերիկայի գյուղատնտեսության դեպարտամենտի կողմից: Այս նշանը կիրառելի է անկախ աշխարհագրությունից այն արտադրանքի համար, որի համապատասխանությունը ԱՄՆ ազգային օրգանական ստանդարտին հավաստվել է:



Bio-Siegel - գերմանական շուկայում սահմանած նշան է, օգտագործվում է 2001-ի սեպտեմբերից: Գերմանացի գնորդների համար նման նշանի առկայությունը ավելի կարևոր է, քան Euro Leaf -ի նշանը, քանի որ Գերմանիայում օրգանական արտադրանքի որակի պահանջները ավելի բարձր են, քան ԵՄ-ում:



Canada Organic – ազգային նշան է, որ սահմանված է Կանադայի օրգանական կանոնակարգերով: Նշանի կիրառությունը ապահովում է օրգանական արտադրանքի ճանաչելիությունը և սպառողների վստահության է արժանացել:



Japanees Agricultural Standart - մշակվել է ճապոնիայի գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնաբուծության նախարարության կողմից և ունի օրենսդրական պահանջների կարգավիճակ ճապոնիայում արտադրված կամ ներմուծված ապրանքների համար:

The Bioland logo consists of the word "Bioland" in white, bold, sans-serif font, centered within a solid green square.

Bioland - Գերմանական օրգանական գյուղատնտեսության արտադրողների ամենամեծ ասոցիացիաներց է: Այս մականանշմամբ նշում են ասոցիացիայի անդամների արտադրած օրգանական արտադրանքները, որոնք համապատասխանում են ասոցիացիայի կողմից սահմանած խիստ պահանջներին:



Green Caucasus – մասնավոր նշան է, որը հանդիսանում է «Էկոգլոբ» սերտիֆիկացնող մարմնի մտավոր սեփականությունը: Այն անհատույց տրվում է ընկերության կողմից սերտիֆիկացված արտադրողների օրգանական արտադրանքի պիտակների վրա կիրառելու համար: Նշանը նաև ունի նպատակ կովկասյան ծագման՝ հայկական և վրացական օրգանական արտադրանքը տարածաշրջանային շուկայում ճանաչելի դարձնելու համար: Նշանը տարածաշրջանում նաև կիրառելի է «Էկոգլոբ» ընկերության վրաց գործընկեր «կովկագլոբ» ընկերության կողմից:



KRAV - հայտնի ամենահին օրգանական նշաններից է՝ շվեդական օրգանական որակի մակնշում, որը ընդունվել է 1985 թ.-ին գյուղատնտեսական արտադրանքի պիտակավորման համար:



The BIO Suisse - օգտագործվում է Շվեյցարիայում վաճառվող օրգանական արտադրանքի մակնշման համար: Մասնավոր նշան է, սակայն վայելում է լայն ճանաչում և հարգանք սպառողի կողմից, որը ամրագրված է խիստ մասնավոր ստանդարտներ պարունակող ստանդարտով:



ՀՀ-ՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԸ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՕԳՈՒՏՆԵՐԸ



- Անհրաժեշտ են պետական և մասնավոր /տեղական և օտարերկրյա/ ներդրումներ,
- Ուղիղ մասնավոր ներդրումներ գյուղատնտեսության և արժեզրթայի մեջ,
- Վերամշակող ընկերությունների կողմից ներդրումային ծրագրերի իրականացում օրգանական արժեզրթայի մեջ,
- 50, 000 հեկտար օրգանական գյուղատնտեսական հողերի մակերեսի հասնելու համար անհրաժեշտ է տարեկան մոտավոր 48 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրումներ,
- Նշված նշակետին հասնելու համար անհրաժեշտ է մասնավոր հատվածի, պետական, ֆինանսական կազմակերպությունների և դոնոր կազմակերպությունների միջոցների համակցում,
- Անհրաժեշտ կլինի նաև ոչ ֆինանսական ներդրումներ կրթության, սպառողների ու արտադրողների շրջանում իրազեկության բարձրացման համար,
- Դոնոր կազմակերպությունների հետ անհրաժեշտ է ներառել կայուն/կանաչ/օրգանական գյուղատնտեսությունը երկկողմ պայմանագրերում,
- Ներառել օրգանական գյուղատնտեսությունը բնապահպանական պետական քաղաքականության մեջ՝ գլոբալ բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը նպաստելու համար:



ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ
ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ՝
ՀՀ - ՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻՅ
ՕԳՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՆ.

- Եթե գյուղատնտեսության քաղաքականությունը նպաստի 2.5 % (50 000 հա) գյուղատնտեսական հողերի փոխակերպմանը օրգանականի և ներառի նաև 6,000-ից 10,000 հեկտար արոտավայրեր օրգանական արտադրության մեջ,
- սահմանվեն նպատակներ՝ 10%-ից մինչև 20 % օրգանական մթերքի սպառումը կատարել տեղում, իսկ 80-90 %-ի իրացումը արտահանման շուկաներում,
- ընտրվեն արատահանվող արտադրատեսակները՝ կենդանական ծագման, այդ թվում մեղր, որի համար առկա է ԵՄ կողմից սահմանած թույլտվություն,
- օրգանական վերամշակված արտադրանքները իրացվեն ինչպես մեծաքանակ, այնպես էլ նախափաթեթավորված՝ ներկայացնելով շուկային հայկական ծագումը (օրինակ՝ NABU Հայաստանյան մասնաճյուղի և գերմանական «Teegeschwaender» ընկերության հայկական բուսական թեյերի համատեղ ծրագիրը),
- Արտադրատեսակների բազմազանությունը ներառի կոնցենտրատներ, հյութեր, խյուսեր, չոր միրգ և բանջարեղեն, խորը սառեցված արտադրանք, պահածոներ, ջեմեր, հաց, պանիր և այլ կաթնամթերք, ձու, միս, բուսական թեյեր, եթերայուղեր, այլն,

Ապա գնահատման վերը թվարկած քաղաքականության իրականացման արդյունքում՝ ընդհանուր շուկայական արժեքը կարող է հասնել 100 միլիոն ԱՄՆ դոլարի:



ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ՊԱՐՏԱԴԻՐ ԵՎ ԹՈՒԼԱՏՐԵԼԻ ՄԵԹՈԴՆԵՐ

- Սննդանյութերով ինքնաբավ տնտեսություններ և սննդանյութերի փակ ցիկլեր՝ կենդանական ու բուսական արտադրության միասնականություն.
- Ցանքաշրջանառություն ընդեղենների մասնակցությամբ՝ հողի բերրիությունը բարձրացնելու համար, բույսերի պաշտպանության խնդիրները լուծելու համար.
- Կենսաբազմազանության պահպանում, օգտակար բույսերի և կենդանիների բնակեցման վայրերի համար նպաստավոր պայմանների ստեղծումը.
- Ռեսուրսախնայող թյուն՝ գյուղատնտեսության տնտեսական կանխիկ փողով հողի, ջրային, հողային և էներգետիկ ռեսուրսների խնայողություն.
- Արտանետումների կառավարում, աղտոտումը բացառող կամ նվազեցնող տեխնոլոգիաների ներդրում արտադրական շղթայում.
- Արտաքին սահմանափակ թույլատրելի ներմուծումների կիրառում միայն այն պարագայում, երբ մեխանիկական, ֆիզիկական և կենսաբանական մեթոդների կիրառումը բավարար չէ.
- Յուրաքանչյուր տարի առնվազն մեկ անգամ օրգանական ստուգայցերի պարտադիր իրականացում.
- Մանրակրկիտ գրանցումների և հաշվառումների վարում:



ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ԱՐՁԵԼՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐ.

- ⊙ Գենետիկորեն փոխակերպված օրգանիզմներ և գենային ինժեներիայի մեթոդներ.
- ⊙ Հանքային պարարտանյութերի կիրառում.
- ⊙ Քիմիապես մշակված սերմերի օգտագործում.
- ⊙ Քիմիական բուժանյութերի բացառում կամ խիստ սահմանափակում.
- ⊙ Իոնացնող ճառագայթման կիրառում.
- ⊙ Հակաբիոտիկներ ու աճի հորմոններ:



ՕՐԳԱՆԱԿԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆ

ԴԵՊԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԱՆԳՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆԸ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է, ԵՐԲ ԱՎԱՆՂԱԿԱՆ / ՈՉ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԻՐ ԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԻ.

- Անցումային շրջանի տևողությունը միամյա և երկամյա մշակաբույսերի համար՝ 24 ամիս է, որից հետո ցանված մշակաբույսի բերքը շուկա հանելիս համարվում է օրգանական.
- Անցումային շրջանի տևողությունը բազմամյա մշակաբույսերի համար՝ 36 ամիս է, որից հետո ստացած բերքը կարելի է հանել շուկա որպես օրգանական:
- Կենդանական արտադրության դեպքում անցումային շրջանը պայմանավորված է արոտավայրերի դեպի օրգանական անցումային շրջանի ավարտով, որից հետո գյուղկենդանիները ու դրանց արտադրանքը շուկա հանելիս նույնպես կհամարվեն օրգանական:
- Մեղվապահության դեպքում անցումային շրջանը տևում է առնվազն մեկ տարի, որի ընթացքում արտադրողը պարտավոր է փոխել ամբողջ մեղրամոմը օրգանականով կամ մաքուր սերեկի ծագում ունեցող մեղրամոմով:
- Յուրաքանչյուր տարի առնվազն մեկ անգամ օրգանական ստուգայցերի պարտադիր իրականացում:
- Մանրակրկիտ գրանցումների և հաշվառումների վարում:

ՕՐԳԱՆԱԿԱՆ
ՄԱՆԴԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ



ՕՐԳԱՆԱԿԱՆ ԱՐՏԱՂՐԱՆՔԻ ՀԵՏԱԳԾԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՂՐՈՒԹՅԱՆ ՈՂՋ ԸՆԹԱՑՔՈՒՄ՝ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՀՈՒՄՔԻՑ ՄԻՆՋ ՊԱՏՐԱՍՏԻ ԱՐՏԱՂՐԱՆՔ.

- Օրգանական գյուղատնտեսական հումքի առկայություն.
- Թուլատրելի հավելումների կիրառում.
- Բաղադրամասերի առնվազն 95%-ի օրգանական ծագում.
- Օրգանական ու ոչ օրգանական արտադրանքների միջև միախառնման կանխարգելում
- Օրգանական արտադրանքը արգելված նյութերի հետ շփման բացառում.
- Հաստատված մակնշումներով ու պիտակներով շուկա դուրս բերում.
- Յուրաքանչյուր տարի առնվազն մեկ անգամ օրգանական ստուգայցերի պարտադիր իրականացում.
- Մանրակրկիտ գրանցումների և հաշվառումների վարում:



ՄՊԱՌՈՐԻ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՆՂԵՊ ԵՎ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՄՊԱՌՈՐԻՆ ՄՈԼՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ
ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՎՈՐ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ



- Օրգանական մակնշումները և տարբերանշանները պետք է վստահություն ներշնչեն և կրեն սերտիֆիկացնող մարմնի մասին տեղեկատվություն, օրինակ՝ «օրգանական սերտիֆիկացումը կատարվել է ... կողմից»
- Սերտիֆիկացնող մարմնի իրավասությունը պետք է հնարավոր լինի հեշտ ստուգել օնլայն հարթակների միջոցով և սերտիֆիկացնող մարմինների կողմից անմիջական տեղեկատվության տրամադրման միջոցով:
- Օրգանական սերտիֆիկացնող մարմինները պարտադիր հրապարակում են սերտիֆիկացված արտադրողներին և նրանց ում սերտիֆիկացումը մերժվել է: Այս տեղեկատվությունը կարևոր է, որ լինի մատչելի յուրաքանչյուր սպառողի համար:
- Վաճառակետերը և արտադրողները պարտավոր են տրամադրել սպառողին սերտիֆիկացման պատշաճ փաստաթղթեր այն արտադրանքի համար, որը տեղադրված է վաճառակետում որպես «օրգանական», «բիո» կամ «էկո», այդ թվում՝ ներմուծված արտադրանքի համար սերտիֆիկատների առկայությունը պարտադիր է:
- Իրավասու պետական մարմինը պատասխանատու է սննդամթերքի շուկայի վերահսկողության համար, այդ թվում՝ կեղծ կամ «օրգանական» կարգավիճակից զրկված արտադրանքը շուկայից հեռացնելու և սանկցիաներ/կիրառելու համար անբարեխիղճ սուբյեկտների նկատմամբ:
- Եթե մանրածախ առևտրի օբյեկտները միջամտում են օրգանական արտադրանքի միասնականությանը, ապա դրանք նույնպես պետք է սերտիֆիկացվեն՝ մոլորության նախադեպից շուկան պաշտպանելու նպատակով:

Գերմանիայի Բնության Պահպանության Միությունը (NABU), հիմնադրվել է 1899թ.-ին: Այն Գերմանիայի հնագույն և խոշորագույն բնապահպանական միություններից է, որին անդամակցում է բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև վտանգված ապրելավայրերի պահպանության նվիրյալ ավելի քան 800 000 անդամ և հովանավոր:

NABU-ի Հայաստանյան մասնաճյուղը աշխատելով Հայաստանի գիտական, պետական, մասնավոր, հետազոտական, ուսումնական և հասարակական կառույցների հետ՝ զբաղվում է գիտահետազոտական, բնության պահպանության, բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանությանն ուղղված աշխատանքներով, աջակցում է բնապահպանական ու մոնիտորինգային ծրագրերի ու գործողությունների իրականացմանը ողջ Հայաստանի տարածքում:

Հանուն մարդու և բնության



📍 ՀՀ, Երևան, Խաչատրյան 18, սենյակ 3

☎ + (374) 44 599949

✉ armenia@nabu.am

🌐 www.nabu.am

BMZ



Federal Ministry
for Economic Cooperation
and Development

Բրոշյուրը պատրաստվել է Գերմանիայի Բնության Պահպանության Միության (NABU) և Գերմանիայի Տնտեսական Համագործակցության և Հարգացման Դաշնային Նախարարության (BMZ) համաֆինանսավորմամբ՝ «Օրգանական գյուղատնտեսության զարգացումը Հայաստանի հյուսիսային համայնքներում որպես աղքատության նվազեցման եվ կենսաբազմազանության պահպանության խթան» ծրագրի (OFDNA) շրջանակներում:



Էկո-Գլոբ
Eco Globe
NGO

Ծրագիրը իրականացվում է Էկո-Գլոբ հասարակական կազմակերպության կողմից: